ՈՉ ՎԵՐՋԻՆ ԵՎ ՈՉ ԱՎԵԼՈՐԴ ԼՈՒՄԱՆ

Սկսած 1996 թվականից՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը անցկացնում է հեռուստամարաթոններ: Դրանք տեղի են ունենում Լոս Անջելեսում՝ յուրաքանչյուր տարվա նոյեմբեր ամսին: 12-ժամյա հեռուստամարաթոնների կազմակերպումը ոչ թե սոսկ դրամահավաքին ուղղված միջոցառում է, այլ հայությանը մեկ միասնական նպատակի շուրջ համախմբող լայնածավալ ձեռնարկ:

Վերջին տարիներին հիմնադրամը հաջողությամբ իրականացնում է «Արցախի վերածնունդ» ծրագիրը: Այն կոչված է լրջորեն խթանելու Լեռնային Ղարաբաղի տնտեսական վերելքը, ինչպես նաեւ ժողովրդի բարեկեցության մակարդակի բարձրացումը:

Եվ ինչպես ամեն մարդ իր ծնողի ու կավակի՝ այդպես ամեն հայ պետք է մտածի անցյալի ու ապագայի մասին: Դրա համար պետք է, որ ամեն հայ տա իր ունեցած ոչ ավելորդ եւ ոչ վերջին լուման՝ այդպիսով ջերմեռանդ ինքնապոհողության եւ սառն անտարբերության միջակայքում գտնելով պատասխանատվությունը ծնողի ապրածի ու կավակի ապրելիքի հանդեպ: Հենց սրանից էլ ելնելով՝ ամեն տարի անցկացվող հեռուստամարաթոնին իրենց ավանդն են ներդնում նաեւ արցախցիները՝ առաջնորդվելով «մենք օգնում ենք մեկ» սկզբունքով: Այս տարի անցկացված հոբելյանական 10-րդ հեռուստամարաթոնին Արցախի մասնակցությունը նախորդներից տարբերվում է մի առանձնակի աշխուժությամբ եւ ոգեւորությամբ: Անցյալ տարվա 35 միլիոն դրամի փոխարեն՝ այս տարի արցախցիների ուժերով հանգանակվել է շուրջ 1 միլիոն դոլարին համարժեք գումար, ինչը ռեկորդային է:

Այդ հանգանակության մեջ իր համեստ լուման է ներդրել նաեւ «Արցախի կանայք» հասարակական կազմակերպությունը՝ հիմնադրամի հաշվին փոխանցելով 30.000 դրամ:

Որպես հայ՝ Հիմնադրամի բոլոր աշխատակիցներին երախտագիտություն ենք հայտնում այն ահռելի աշխատանքի համար, որ նրանք կատարում են հանուն մեր ազգի միավորման ու առաջընթացի:

«Արցախի կանայք» ՀԿ